ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Գյուղ Փարաքար, Նաիրի փողոց 42
հեռ. 023 1 6 00 42
www.parakar.am

---

08. 08 2011 թ. N 387

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան Աշոտ Սարգսի

Ուղարկվում է Փարաքար համայնքի ղեկավարի 2011 թվականի հուլիս ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Կից 9 թերթ:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ [illegible]
Մուտք թիվ 7839-11
«10» 08 2011

Կատ.՝ Գ.Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հուլիսի 2011 թ. թիվ 33

## ԱՍՅԱ, ՍՈՒՐԿՈ, ՄԱՆՎԵԼ ԵՎ ՍԱՄՎԵԼ ԱԲԱՍՅԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին„ Հայաստանի Հանրապետության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության „Տեղական ինքնակառավարման մասին„ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով„ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 –Ն որոշմամբ , նկատի ունենալով, որ կառույցն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և հիմք ընդունելով Ասյա Աբասյանի 2011 թվականի հուլիսի 22-ի դիմումը.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի Փարաքար գյուղում Ասյա Աբասյանի և մյուսներին սեփականության իրավունքով պատկանող 700.0 քմ տնամերձ հողամասի վրա կառուցած 413,0 քմ բնակելի տան սեփականության իրավունքը:
2.Շենք, շինությունների մակերեսները ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Բնակելի տանը և տնամերձ հողամասին տրամադրել հասցե. գյուղ Փարաքար, Վ.Սարգսյան 1-ին փողոց թիվ 4:
4.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանմանը՝ գրանցելու քաղաքացի Ասյա Աբասյանի և մյուսների սեփականության իրավունքը, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Փ/Պ Ս. ՕՀԱՆՅԱՆ

2011 թվական հուլիսի 25
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հուլիսի 2011 թ. թիվ 32

## ՀՈՂԱՄԱՍԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետով,, 118-րդ հոդվածի 4-րդ կետի 3-րդ մասով, 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 38-րդ կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության ,,Ճանապարհային ոստիկանություն,, ծառայության հիմնարկի պետի 2011 թվականի հուլիսի 12-ի թիվ 17/1-4731 գրությունը.

Որոշում եմ՝

1. Նախկինում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի տարածքում գտնվող Ճանապարհային ոստիկանության պահակակետի զբաղեցրած և շահագործման համար անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով 1678.0 քմ հողամասի հատկացման փաստաթղթերը համարել վերականգնված:
2.Ճանաչել Հայաստանի Հանրապետության ոստիկանության ,,Ճանապարհային ոստիկանություն,, ծառայության, անհատույց (մշտական) օգտագործման իրավունքը պահակակետի զբաղեցրած և շահագործման համար հատկացված 1678.0 քմ հողամասի նկատմամբ՝ համաձայն հավելվածի:
3. Պահակակետին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Մայրաքաղաքային փողոց թիվ 7:
4.Սույն որոշումից ծագող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից
5 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ս.ՕՀԱՆՅԱՆ

2011 թվական հուլիսի 25
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հուլիսի 2005 թ. թիվ 31

## ՍԱՄՎԵԼ ՍՈԿՐԱՏԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 118-րդ հոդվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Սամվել Կարապետյանի դիմումը վերականգնելու իրեն սեփականության իրավունքով պատկանող առևտրի տաղավարի զբաղեցրած հողատարածքի վարձակալության իրավունքը:

Հաշվի առնելով, որ Սամվել Կարապետյանին վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 30.0 քմ և ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում՝

Որոշում եմ՝

1. Վերականգնել Սամվել Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Թաիրով գյուղի Մայրաքաղաքային փողոցի թիվ 129/1 հասցեում գտնվող առևտրի տաղավարի զբաղեցրած 30.0 քմ հողատարածքի վարձակալության իրավունքը:
2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2011 թվականի հուլիսի 19
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հուլիսի 2011 թ. — թիվ 30

ՓԱՐԱՔԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՐԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ ՆԱՐԵԿԱՑԻ ԹԱՂԱՄԱՍԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգքի 188-րդ հոդվածի երկրորդ կետով ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն` «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման մասին» որոշման 2-րդ մասով, նկատի ունենալով, որ նշված հողատարածքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ինքնակամ զբաղեցրել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում սերվիտուտ պահաջելու իրավունք և հիմք ընդունելով Գնել Լիպարիտի Խալաթյանի 2011 թվականի հուլիսի 19-ի դիմումը,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար գյուղական համայնքի Փարաքար գյուղի Նարեկացու թաղամասի 5-րդ փողոցի թիվ 24 հասցեի 04-094-0009-0002 կադաստրային համարում գտնվող 600,0 քմ տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցած 350,0 քմ մակերեսով բնակելի տունը և տնամերձ հողամասին կից ինքնակամ զբաղեցրած 12,0 քմ հողատարածքը ճանաչել օրինական:
2.Շինության մակերեսը ենթակա է ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Շինությանը և հողատարածքին տրամադրել հասցե. գյուղ Փարաքար Նարեկացու թաղամասի 5-րդ փողոցի թիվ 24 հասցեի
5.Ինքնակամ զբաղեցրած հողատարածքի և ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
6.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանմանը` գրանցել քաղաքացի Գնել Լիպարիտի Խալաթյանի սեփականության իրավունքը, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
7 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2011 թվականի հուլիսի 19
գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հուլիսի 2011 թ. թիվ 29

### ՓԱՐԱՔԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՐԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ Ռ.ԳԱՍՊԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգքի 188-րդ հոդվածի երկրորդ կետով ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն` «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման մասին» որոշման 2-րդ մասով և նկատի ունենալով, որ կառույցն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և հիմք ընդունելով Սամվել Սահակի Հարությունյանի 2011 թվականի հուլիս 15-ի դիմումը,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ`

1. Ճանաչել Սամվել Սահակի Հարությունյանի սեփականության իրավունքը Փարաքար գյուղի Ռոբերտ Գասպարյան` նախկին Հոկտեմբերի փողոցի թիվ 2 հասցեում գտնվող 04-094-0070-0002 կադաստրային համարով 1794,0 քմ տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցած շինության նկատմամբ:
2.Շինության մակերեսը ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Շինությանը և հողատարածքին տրամադրել հասցե. գյուղ Փարաքար Ռոբերտ Գասպարյան փողոցի թիվ 2:
4. Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կան անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում սերվիտուտ պահաջելու իրավունք:
5.Ինքնակամ զբաղեցրած հողամասի և ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
6.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանմանը` գրանցել քաղաքացի Սամվել Հարությունյանի սեփականության իրավունքը, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
7 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2011 թվականի հուլիսի 18
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հուլիսի 2011 թ. | թիվ 28

## ՎԱՀԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով,նկատի ունենալով, որ նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ինքնակամ զբաղեցրել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և հիմք ընդունելով Վահիկ Գրիգորյանի 2011 թվականի հուլիսի 15-ի դիմումը.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Ճանաչել Վահիկ Գրիգորյանի սեփականության իրավունքը Փարաքար գյուղի Բարեկամության փողոցի թիվ 35 հասցեում գտնվող 04-094-0049-0010 կադաստրային համարով 730.0 քմ տնամերձ հողամասին կից ինքնակամ զբաղեցրած 33.0 քմ հողամասի և ինքնակամ շինության նկատմամբ:
2.Շինության մակերեսը ենթակա է ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Շինությանը և հողատարածքին տրամադրել հասցե. գյուղ Փարաքար Բարեկամության փողոցի թիվ 35:
4. Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կան անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում սերվիտուտ պահաջելու իրավունք:
5.Ինքնակամ զբաղեցրած հողամասի և ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
6.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանմանը՝ գրանցել քաղաքացի Վահիկ Գրիգորյանի սեփականության իրավունքը, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
7 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2011 թվական հուլիս 18
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1 հուլիսի 2011 թ. թիվ 21

ԱԼՄԱՍՏ ՍՎԱՋՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ և 159-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի ամենամյա արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը սահմանելու մասին» թիվ 1599-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ալմաստ Սվաջյանի 2011 թվականի հունիսի 30-ի դիմումը.

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար գյուղական համայնքի «Հովիկ Էդգարյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ալմաստ Սվաջյանին 2011 թվականի հուլիսի 1-ից տրամադրել 2011 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդը՝ 25 աշխատանքային օր (20 նվազագույն + 5 լրացուցիչ,) տևողությամբ:
2. Աշխատանքի մեջ համարել 2011 թվականի օգոստոսի 8 -ից:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2011 թվական հուլիսի 1
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

9 հուլիսի 2011 թ. թիվ 22

ՎԱՂԱՐՇԱԿ ՄԻՐԶՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը սահմանելու մասին» թիվ 1599-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Վաղարշակ Միրզոյանի 2011 թվականի հուլիսի 6-ի դիմումը.

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար գյուղական համայնքի «Բարեկարգում» տնօրինության տնօրեն Վաղարշակ Միրզոյանին 2011 թվականի հուլիսի 7-ից տրամադրել 2011 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդը՝ 24 աշխատանքային օր (20 նվազագույն +4 լրացուցիչ,) տևողությամբ:
2. Աշխատանքի մեջ համարել 2011 թվականի օգոստոսի 9-ից:
3.Վաղարշակ Միրզոյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի պարտականությունները վերապահել Արտակ Մկրտումյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2011 թվական հուլիսի 9
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

19 հուլիսի 2011 թ. թիվ 23

## ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը,այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» թիվ 1384-Ն որոշման N 1 հավելվածով,

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար գյուղական համայնքի ղեկավար Սամվել Վարդանյանին 2011 թվականի հուլիսի 20-ից տրամադրել 2011 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդից՝ 13 աշխատանքային օր:
2. Սամվել Վարդանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում համայնքի ղեկավարի պարտականությունները վերապահել Սարիբեկ Օհանյանին:
3. Աշխատանքի մեջ համարել 2011 թվականի օգոստոսի 8 -ից:
4. Սույն հրաման ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2011 թվականի հուլիսի 19
գյուղ Փարաքար